ԱՐՏԱՇԵՍ ԱՐԿԱԴԻԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(1909 -1993 թթ.)

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ՝ ԳԻՏՆԱԿԱՆԻ, ՄԱՐԴ-ՔԱՂԱՔԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Լրացավ հայ ականավոր տնտեսագետ, Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ակադեմիկոս, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Արտաշես Արկադիի Առաքելյանի ծննդյան 100-ամյակը:

Ա.Առաքելյանը տնտեսագետների այն սերնդի ներկայացուցիչներից էր, որոնց ստեղծագործության առանցքը դարձան տնտեսագիտության տեսական հիմնախնդիրների համակողմանի ու խոր հետազոտությունը, ինչը զուգակցվեց տնտեսագիտական մեթոդաբանական հարցերի մշակմամբ, ինչպես նաև տնտեսագիտական կադրերի նոր սերունդ աճեցնելու հետ՝ դրանով իսկ լուծելով գործնական կարևորագույն խնդիր: Նրա շատ արժեքավոր հետազոտություններ, որոնք վերաբերում են հիմնական ֆոնդերի վերարտադրության, գիտատեխնիկական առաջընթացի, արտադրության կառավարման սկզբունքների և տնտեսական հաշվարկի տեսական և գործնական հիմնախնդիրներին, որոշակի ներդրում եղան տնտեսագիտության զարգացման գործում:

Ա. Առաքելյանը ծնվել է 1909թ. ապրիլի 28-ին Շուշի քաղաքում: 1932թ. ավարտել է Բաքվի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և նշանակվել Լեռնային Ղարաբաղի մարզպլանի նախագահի տեղակալ: Նա մասնակցել է մարզի տնտեսական և սոցիալական զարգացման երկրորդ հնգամյա պլանի մշակմանը:

1946թ. հաջողությամբ ավարտելով Մոսկվայի պլանային ինստիտուտի ասպիրանտուրան՝ Արտաշես Առաքելյանն աշխատանքի է անցնում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում: Այստեղ նրան բախտ է վիճակվել համատեղ աշխատելու և մոտիկից շփվելու տնտեսագիտության ականավոր ներկայացուցիչների՝ Ս.Գ.Ստրումիլինի, Կ.Վ.Օստրովիտյանովի, Հ.Հ.Հարությունյանի, Ա.Ի.Պաշկովի և այլ նշանավոր դեմքերի հետ, որոնք խոշոր դեր խաղացին Առաքելյանի՝ որպես տնտեսագետ գիտնականի հետագա գիտական առաջընթացի գործում:

Շուրջ քառորդ դար նա աշխատել է ԽՍՀՄ գիտական այդ նշանավոր օջախում: Դեռևս նախապատերազմյան տարիներին, չափազանց կարճ ժամանակամիջոցում, գիտական ամսագրերում իրար ետևից լույս տեսան բազմաթիվ իր ժամանակին արժեքավոր հոդվածներ, որոնց հաջորդում է նրա «ԽՍՀՄ արդյունաբերության հիմնական ֆոնդերը» (1938թ.) լուրջ ուսումնասիրությունը: Ա.Առաքելյանն այդ աշխատության մեջ և դրան նախորդող հոդվածաշարում տվել է հիմնական ֆոնդերի սոցիալ-տնտեսական բնութագրությունը:

Առաջ քաշված բազմաթիվ հարցադրումներ իրենց տեսական զարգացումն ստացան Հայրենական պատերազմի ավարտից հետո նրա հրատարակած այնպիսի աշխատու-

թյուններում, ինչպիսիք էին «Հիմնական միջոցների օգտագործումը», որն ունեցել է երկու հրատարակություն (1950 և 1951թթ.), «Տնտեսաշվարկը և հիմնական ֆոնդերի օգտագործումը» (1954թ.), «Հիմնական ֆոնդերի վերարտադրությունը» (1970թ., համահեղինակությամբ) և այլ ուսումնասիրություններում:

1947թ. Մոսկվայում լույս տեսավ Ա.Առաքելյանի «Սոցիալիստական արտադրության կառավարումը» մենագրությունը, որն արժանացավ ինչպես ԽՍՀՄ, այնպես էլ արտասահմանյան տնտեսագետների ուշադրությանը: Այստեղ առաջ քաշված տեսական մի շարք դրույթներ տրամաբանական լուծում ստացան և ավարտին հասցվեցին «Տնտեսաշվարկը ԽՍՀՄ արդյունաբերության մեջ» ծավալուն գրքում (1956թ.):

Գիտնականի հետազոտություններում մեծ տեղ են գրավում նաև գիտատեխնիկական առաջընթացի էության ու դրսևորման ձևերի, նրա սոցիալ-տնտեսական հետևանքների բացահայտման խնդիրները: Այդ հարցերի քննարկմանն են նվիրված բազմաթիվ աշխատություններ: Բացի այդ մի շարք ուսումնասիրություններ վերաբերում էին աշխատանքի արտադրողականության հանգամանալից վերլուծությանը:

Մեծ է Առաքելյանի վաստակը բուհական տնտեսագիտական դասագրքերի ստեղծման գործում: Դեռևս 1940թ. ԽՍՀՄ ԳԱ հրատարակած «Սոցիալիստական արդյունաբերության էկոնոմիկա» և 1956թ. հրատարակած «ԽՍՀՄ արդյունաբերության էկոնոմիկա» բուհական դասագրքերի հեղինակներից ու խմբագիրներից մեկը Ա. Առաքելյանն էր: 1963թ. նրա հեղինակակցությամբ Մոսկվայի պետական համալսարանում լույս է տեսնում քաղաքատնտեսության երկհատոր ձեռնարկը, որը մի քանի անգամ վերահրատարակվել է: 1960թ. մայրենի լեզվով լույս տեսած նրա «Սոցիալիզմի քաղաքատնտեսություն» ծավալուն ուսումնական ձեռնարկը, որը թեև այսօր լիովին չի համապատասխանում տնտեսագիտության արդի պահանջներին, սակայն երկար տարիներ եղել է բուհերի ուսանողների և տնտեսագիտության գծով ասպիրանտների անբաժան ուղեկիցը:

Արտաշես Առաքելյանի գիտական գործունեությանը բնորոշ էր նաև եռանդուն գիտակազմակերպչական աշխատանքը: 1960թ. նա ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս և տեղափոխվելով Հայաստան ու ստանձնելով ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը (27 տարի)՝ ամենայն գործիմացությամբ ձեռնամուխ է լինում բազմաթեմայնության հաղթահարմանը և ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը նպատակամղում հանրապետության հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման համալիր խնդիրների մշակմանը: Արմատապես բարելավվեց ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան, բարձրացավ հետազոտությունների կատարման որակը, ստեղծվեցին բազմաթիվ հիմնարար ուսումնասիրություններ, ինստիտուտը դարձավ հանրապետության տնտեսագիտական մտքի կենտրոն, տնտեսագիտական կադրերի պատրաստման դարբնոց: Նշենք, որ անցումային շրջանում տարբեր պաշտոններ և դիրքեր զբաղեցրին հենց այդ ինստիտուտի երիտասարդ մասնագետների մի զգալի մասը:

Ա. Առաքելյանը խոշոր ավանդ ունի տնտեսագիտական մշակումները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու գործում: Ավելի քան երկուսուկես տասնամյակի ընթացքում նրա ղեկավարությամբ ինստիտուտում մշակված և անձամբ իր կողմից ավարտված են շատ աշխատանքներ, մասնավորապես երկարատև հեռանկարում հանրապետության սոցիալ-

տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ընդգրկող բազմաբովանդակ հետազոտություններ, որոնք ներդրվել են հանրապետության ժողովրդական տնտեսության գիտական պլանավորման ու հեռանկարային կանխատեսումների ասպարեզում: Նկատենք, որ հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման հարցերը նա քննարկում էր տարբեր երկրների գիտատեխնիկական առաջընթացի և տնտեսական ինտեգրացիայի կողմից առաջադրված պահանջների տեսանկյունից:

Ա. Առաքելյանի բազմաթիվ հոդվածներ զետեղվել են կենտրոնական պարբերական մամուլի՝ «Վոպրոսի էկոնոմիկի», «Պլանովոյե խոզյայստվո» և այլ ամսագրերի էջերում:

Արտաշես Առաքելյանի ուսումնասիրությունների գիտական արդյունքներն ամփոփվել են շուրջ 250-ի հասնող մենագրություններում, դասագրքերում, գրքույկներում, ինչպես նաև գիտական ժողովածուներում, պարբերական և ընթացիկ մամուլում զետեղված հոդվածների մեջ: Աշխատությունների մի զգալի մասը թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, լեհերեն, չեխերեն, ճապոներեն, արաբերեն և այլ լեզուներով:

Գիտական նպատակներով Հայաստան այցելած արտասահմանյան բազմաթիվ տնտեսագետներ հայ մասնագետների հետ ունեցած պաշտոնական հանդիպումների ընթացքում, ի թիվս այլ տնտեսագետների, բարձր են գնահատել նաև մեր հայրենակցին: Նա բազմաթիվ առիթներով եղել է արտասահմանյան շատ երկրներում: Դեռևս 1951թ. խորհրդային փորձագետների պատվիրակության կազմում մասնակցել է արտաքին առևտրի գծով ՄԱԿ-ի կազմակերպած միջազգային կոնգրեսի աշխատանքներին: 1963թ. ԽՍՀՄ պատվիրակության կազմում մասնակցել է զարգացող երկրներում գիտության ու տեխնիկայի նվաճումները կիրառելու հարցերի գծով Ժնևի կոնֆերանսին, որտեղ ներկայացրած զեկուցմանը զուգընթաց հանդես է եկել մի շարք ելույթներով: ԽՍՀՄ պատվիրակության կազմում նա մասնակցել է Իտալիայում տնտեսագետների միջազգային ասոցիացիայի կոնֆերանսին (1967թ.), որտեղ քննարկվել են տարածաշրջանային տնտեսական քաղաքականության խնդիրներ: Նա մասնակցել է նաև միջազգային մի շարք այլ կոնֆերանսների ու գիտաժողովների: Բազմաթիվ զեկուցումներով ու հրապարակային դասախոսություններով հանդես է եկել ԱՄՆ-ում, Անգլիայում, Բուլղարիայում, Գերմանիայում, Կանադայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, ինչպես նաև Լոնդոնի, Հռոմի, Միլանի, Մանչեստրի և այլ հայ գաղութներում:

Արտաշես Առաքելյանի աշխատությունները, հրապարակային դասախոսությունները և զեկուցումները բարձր են գնահատվել ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև արտասահմանում: Ֆրանսիական «Դեմոկրատի նուվել» ամսագիրը Ա. Առաքելյանին անվանել է «Նշանավոր տնտեսագետ գիտնական»: Ա. Առաքելյանի «ԽՍՀՄ արդյունաբերության հիմնական միջոցների օգտագործումը» մենագրության գերմաներեն հրատարակության առաջաբանում (Բեռլին, 1953թ.) նշվում է հեղինակի աչքի ընկնող դերը հիմնական ֆոնդերի և դրանց օգտագործման հիմնախնդիրների մշակման գործում:

Ակադեմիկոս Ա. Առաքելյանը մանկավարժ գիտնական էր: 1928թ. սկսած՝ դասավանդել է միջնակարգ դպրոցում, 1932թ.՝ բուհերում (Մոսկվա, Երևան): Նրա ղեկավարությամբ գիտական աստիճան են ստացել շուրջ վեց տասնյակ գիտության թեկնածուներ ու դոկտորներ:

1940թ. Ա. Առաքելյանը չորս տարի գրիչը փոխարինել է զենքով և կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Երկու անգամ վիրավորվել է: Պարգևատրվել է Հայրենական մեծ

պատերազմի 2-րդ աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով և 8 մեդալներով:

Բազմավաստակ գիտնականը միշտ էլ ակտիվորեն մասնակցել է ԽՍՀՄ և հանրապետության հասարակական կյանքին: Խորը գիտական, հետաքրքիր ու հանրամատչելի զեկուցումներով, դասախոսություններով ու զրույցներով նա հաճախ է հանդես եկել երկրի տարբեր քաղաքներում կազմակերպված գիտական նստաշրջաններում: Շուրջ 10 տարի եղել է ԽՍՀՄ ԲՈՀ-ի և նրա էքսպերտ հանձնաժողովի անդամ: Երկար տարիներ ղեկավարել է հանրապետությունում տնտեսագիտական հետազոտությունների համակարգող խորհուրդը: Նա Երևանում ու Մոսկվայում մի շարք տնտեսագիտական գիտական խորհուրդների, հրատարակչական խորհրդի, գիտության ու տեխնիկայի գծով հանրապետության պետական մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ էր:

Հայ խոշորագույն տնտեսագետ գիտնականներից մեկի՝ ակադեմիկոս Ա. Առաքելյանի կերպարը այսօր էլ ուսանելի օրինակ է հետազոտող գիտնականների և բուհերի դասախոսների համար:

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ԵՊՏՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ
տ.գ.դ., պրոֆեսոր